# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՀՆԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հնաբերդ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Հնաբերդ, 098025050, ararathnaberd@yandex.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 հոկտեմբերի 2014թվականի N 19

## ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՀՆԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2014Թ.- Ի ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով, համայնքի ավագանին

ՈՐՈՇԵՑ՝

Թույլատրել համայնքի ղեկավարին Հնաբերդ Համայնքի 2014թ.-ի Վարչական բյուջեի մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

ԵԿԱՄՏԱՅԻՆ ՄԱՍ

1. Համաձայն ՀՀ Կառավարության 2014թ. հուլիսի 31-ի № 792-Ն որոշման 1-ին կետի 3-րդ հավելվածի, Արարատի մարզպետարանը Արարատի մարզի Հնաբերդի համայնքային բյուջեի «Ընթացիկ սուբվենցիաներ համայնքներին» հոդվածով հատկացնում է 56.4 հազար ՀՀ դրամ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» և «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքների կիրառման արդյունքում համայնքային բյուջետային հիմնարկներում և համայնքի բյուջեից ֆինանսավորվող համայնքային ոչ առևտրային կազմակերպություններում 1974 թ.-ի հունվարի 1-ից հետո ծնված՝ նվազա-գույն աշխատավարձ ստացող աշխատողների նպատակային սոցիալական վճարների գումարների վճարմամբ պայմանավորված՝ առաջացող լրացուցիչ ծախսերի ֆինանսավորման նպատակով:
2. Վարչական բյուջեի եկամտային մասում ավելացնել նոր կետ «Ընթացիկ սուբվենցիաներ համայնքներին»՝ 900415172288 հաշվեհամարով և սահմա-նել ընդամենը՝ 56.4 հ.դ.:
3. Վարչական բյուջեի եկամտային մասի «Այլ եկամուտներ» այդ թվում՝ «Վարչական գանձումներ» այդ թվում՝ «Մուտքեր տույժերից և տուգանքներից» այդ թվում՝ «Վարչական իրավախախտումների համար» նախատեսված 30.0 հ.դ.-ը համարել չեղյալ տուգանումներ չլինելու պատճառով:
4.Վարչական բյուջեի ընդամենը եկամուտներ 11 162.1 հազար դրամ թիվը ավելացնել 26.4 հ.դ.-ով և սահմանել ընդամենը 11 188.5 հ.դ.:

ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍ

1. Վարչական բյուջեի եկամտային մասը 26.4 հ.դ.-ով ավելանալու հետևանքով Վարչական բյուջեի Ընդամենը ծախսեր 11 162.1 հազար դրամ թիվը ավելացնել 26.4 հ.դ.-ով և սահմանել ընդամենը 11 188.5 հ.դ.:

2. Վարչական բյուջեի ծախսային մասի 01.01.01.51 (Կառավարման մարմնի պահպանում) գործառնական դասակարգման մեջ նախատեսված 4111 (Աշխատավարձ) հոդվածը ՀՀ Կառավարության 2014թ. հուլիսի 31-ի № 792-Ն որոշման 1-ին կետի 3-րդ հավելվածի ավելացնել 28.2 հ.դ.-ով և սահմանել ընդամենը՝ 6 338.2 հ.դ.:

3. Վարչական բյուջեի ծախսային մասի 08.02.04.51 (Մշակութային միջոցառումների իրականացում) գործառնական դասակարգման մեջ նախատեսված 4111 (Աշխատավարձ) հոդվածը ՀՀ Կառավարության 2014թ. հուլիսի 31-ի № 792-Ն որոշման 1-ին կետի 3-րդ հավելվածի ավելացնել 28.2 հ.դ.-ով և սահմանել ընդամենը՝ 1 564.2 հ.դ.:

4. Վարչական բյուջեի ծախսային մասի 11.01.02.51 (Պահուստային ֆոնդ) գործառնական դասակարգման մեջ նախատեսված 4891 (Պահուստային միջոցներ) հոդվածի 66.1 հ.դ. թիվը վարչական բյուջեի եկամտային մասի պակասելու հետևանքով պակասեցնել 30.0 հ.դ.-ով և սահմանել ընդամենը 36.1 հ.դ.:

5. Վարչական բյուջեի ծախսային մասի 09.01.01.51 (Նախադպրոցական կրթություն) գործառնական դասակարգման մեջ նախատեսված 4637 (Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին) հոդվածից 40.0 հ.դ. տեղափոխել 10.07.01.54 (Սոցիալապես անապահով անձանց աջակցություն) գործառնական դասակարգման վրա, որից՝ 4726 (Հուղարկավորության նպաստներ) հոդվածի վրա՝ 10.0 հ.դ. և 4729 (Այլ նպաստներ) հոդվածի վրա 30.0 հ.դ., Հնաբերդ համայնքի մահացած անդամ ունեցող և սոցիալապես անապահով ընտանիքներին ֆինանսական աջակցություն ցուցաբերելու համար:

6. Վարչական բյուջեի ծախսային մասի 09.01.01.51 (Նախադպրոցական կրթություն) գործառնական դասակարգման մեջ նախատեսված 4637 (Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին) հոդվածից 30.0 հ.դ. տեղափոխել 09.08.01.55 (Կրթություն (այլ դասերին չպատկանող)) գործառնական դասակարգման մեջ նախատեսված 4637 (Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին) հոդվածի վրա՝ Հնաբերդի մշնակարգ դպրոցին ֆինանասական աջակցություն տալու համար:

7. Վարչական բյուջեի ծախսային մասի 09.01.01.51 (Նախադպրոցական կրթություն) գործառնական դասակարգման մեջ նախատեսված 4637 (Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին) հոդվածից 30.0 հ.դ. տեղափոխել 01.03.03.55 (Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ) գործառնական

դասակարգման մեջ նախատեսված 4239 (Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ) հոդվածի վրա:

8. Վարչական բյուջեի ծախսային մասի 09.01.01.51 (Նախադպրոցական կրթություն) գործառնական դասակարգումը համարել չեղյալ:

Ավագանու անդամներ՝

Մ. Զաքարյան

Մ. Ավագյան

Վ. Սիմոնյան

Դ. Դավթյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՐԱՏ ՊՈՂՈՍՅԱՆ